Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 800 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հունիսի 27-ի N 457-Ա որոշմամբ բարեգործական է որակվել «Բնակելի շենքերի կառուցում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ թաղամասում կառուցվելու է 9 հարկանի 2 բնակելի շենքերով համալիր: Այժմ նշված համալիրի բնակիչների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով նախատեսվում է կառուցվող բնակարանները ապահովել անհրաժեշտ կահույքով և կենցաղային տեխնիկայով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ» թաղամաս, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	96,969,500 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Գյումրի քաղաքում բնակվող 44 օրյա պատերազմի հաշմանդամ զինծառայողներ, երկրաշարժից անօթևան մնացած, տնակներում բնակվող ընտանիքներ:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 2024 թվականի հունիսի 28-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Կառուցվող բնակարանների շահառուների համար ձեռք է բերվելու 50 հատ ավտոմատ լվացքի մեքենա և 50 հատ գազօջախ, տեղափոխվելու և տեղադրվելու է բնակարաններում՝ 7,041,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածում: 2. Կառուցվող բնակարանների շահառուների համար ձեռք է բերվելու 50 հատ սառնարան, տեղափոխվելու և տեղադրվելու է բնակարաններում՝ 6,630,000 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 28-ից մինչև 2024 թվականի փետրվարի 1-ը: 3. Կառուցվող բնակարանների շահառուների համար պատրաստվելու և գնվելու են աթոռներ, բազկաթոռներ, բազմոցներ, գրասեղաններ, պահարաններ, զգեստապահարաններ, լրագրասեղաններ, խոհանոցի կահույք, կողապահարանիկներ, մահճակալներ և ներքնակներ, հեռուստացույցի տակդիրներ, հյուրասենյակի սեղաններ, որոնք տեխափոխվելու և տեղադրվելու են բնակարաններում՝ 43,292,200 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել դեկտեմբերի 1-ից մինչև 2024 թ. հունիսի 28-ն ընկած ժամանակահատվածում: 4. Կառուցվող բնակարանների շահառուների համար պատրաստվելու և գնվելու են աթոռներ, բազ-կաթոռներ, բազմոցներ, գրասեղաններ, պահարաններ, զգեստապահարաններ, լրագրասեղաններ, խոհանոցի կահույք, կողապահարանիկներ, մահճակալներ և ներքնակներ, հեռուստացույցի տակդիրներ, հյուրասենյակի սեղաններ, որոնք տեխափոխվելու և տեղադրվելու են բնակարաններում՝ 40,006,300 դրամի չափով: Նախատեսվում է իրականացնել դեկտեմբերի 1-ից մինչև 2024 թ. հունիսի 28-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկա-րագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Կառուցվող բնակարանների շահառուների համար կենցաղային տեխնիկայի մատակարարում և տեղադրում ՝ 7,041,000 դրամ: 2. Կառուցվող բնակարանների շահառուների համար կենցաղային տեխնիկայի մատակարարում և տեղադրում՝ 6,630,000 դրամ:

		3. Կառուցվող բնակարանների շահառուների համար գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տեղադրում՝ 43,292,200 դրամ: 4. Կառուցվող բնակարանների շահառուների համար գույքի պատրաստում, գնում, տեղափոխում և տեղադրում՝ 40,006,300 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Գյումրու քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ